և զկարգն քո և դու կամաւ հրաժարեցար յերիցու-
թենէ՝ մինչև Աստուածատուր վարդապետն գայ և դա-
տաստան առնէ. և նա ասաց՝ Այո՛յ։ Եւ եպիսկոպոսն
ասացեալ թէ Դնա՛ և Բ մարդ աշխարհական և Բ քա-
հանայ, մինչեւ գայ մեծ վարդապետն, չարութիւն
չառնելուդ եւ չփախչելուդ մեզ երաշխաւոր տո՛ւր
որ միամտանանք մեք։ Եւ նա գնացեալ յայս կոյս
յայն կոյս ի քար և ի թուփ դիպելով ոչ գտաւ երաշ-
խաւոր և ոչ մի. և ի ժամուս որ ոչ գտվաւ իւրն քէ-
ֆիլ, որք կային ամբոխն՝ ոչ Ցաց մարդ թէ չը թքաւ
յերեսն եւ նախատինք եւ արհամարհանք թէ Դու որ
այդմ պատուոյ ես հաւասար, որ ահագին յեկեղեցիս
քեզ քէֆիլ չը գտար, և դու վասն յայսմ գործոց ես
եղեալ եւ չարութեան յետեւէ շուրջ կու գաս, ա՛յ
նզովեալ, ա՛յ պիղծ, ա՛յ չար, ասելով։ Եթէ ոչ էր
տեղ դատաստանի, նա՛ զչարն զայն ի տեղն կու սա-
տակեցուցանէին։ Եւ եկեալ ի մի բերան ամենեքեան
թէ Վասն է՞ր արգիլէք. ահա՛ դատաստան այս է որ
եղև. թէ Աստուածատուր վարդապետն գայ, նա՛ զայս
դատաստանս առնէ, կամ թէ նա վասն է՞ր առնէ մի
պոռնիկ երիցու. այժմ արժան է դա ի կենաց հանել
և զմեղսն մեք առնեմք դորա՝ եթէ չէ արժան։ Եւ
եպիսկոպոսն ասացեալ թէ Որովհետև այսչափ ժողո-
վուրդ որ չարութեանն վկայեցին և ոչ գտաւ մի մարդ
որ բարութեան վկայէին, կամ մի երաշխաւոր՝ արժան
է բառնալ ի կենաց։ Եւ Ցարութիւնն և Հաճի Ղուրան
ձայնեցին զՏէր Ցակոբն թէ Սորա հիւճէթն կայ ի քո
քովն, որ բոզի վերայ է բռնվեր, զայն գնա բե՛ր. և
նա յանդէտս եղեալ թէ Զգիտեմ. և ամենեքեան նո-
րա վերայ հաւաքեցան թէ Քեզ գան և ճէրիմէ առ-
նել կու տամք թէ չտաս։ Նոյնպէս և եպիսկոպոսն ա-
սացեալ, Թէ չբերես՝ նա՛ զքեզ ի նորա կարգն դնել
կու տամք։ Եւ նա ճար ոչ գտեալ՝ գնաց թէ Բերեմ.